ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060544 301

<<Ինֆորմացիայի ազատության կենտրոն>> ՀԿ
իրավաբան պարոն Գ. Հայրապետյանին

Հարգելի պարոն Հայրապետյան

Ի պատասխան Ձեր 05/09/13թ. թիվ 210-ի 2 գրությամբ ներկայացված հարցման՝ կրկին անգամ հայտնում ենք, որ կնքված պայմանագրերի մասին հայտարարությունները, որտեղ ներառված է հիշյալ գրության մեջ նշված տեղեկատվությունը, <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն հրապարակվում է www.azdarar.am հասցեում գտնվող ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Մասնավորապես պահանջվող տեղեկատվությունը ստանալու համար անհրաժեշտ է այցելել նշված կայքի <<Հայտարարություններ>> բաժին և ըստ հայտատուների՝ <<ՀՀ կառավարությանն առընթեր մարմիններ>> բաժնից ընտրել <<Պետական եկամուտների կոմիտե>> ենթաբաժինը /հղում՝ azdarar.am/announcments/org/80//: Միաժամանակ հայտնում ենք, որ www.e-gov.am կայքում հրապարակվում են Օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն կնքված պայմանագրերը, որոնք տեղադրված են նշված կայքի <<Մեկ անձից կատարվող գնումներ>> բաժնում, որտեղ <<Ֆիլտրում ըստ տարեթվի>> պատուհանից անհրաժեշտ է ընտրել համապատասխան տարեթիվը, իսկ <<Ֆիլտրում ըստ պետական մարմնի>> պատուհանից՝ <<ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե>> հղումը:

Նշվածի կապակցությամբ հայտնում ենք նաև, որ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն գնումների բազային միավորը գերազանցող պայմանագրերի մասին հայտարարությունները հրապարակվում են www.gnumner.am կայքի <<Գնումների հայտարարություններ>> բաժնի <<Կնքված պայմանագրերի մասին հայտարարություններ>> բաժնի՝ ըստ գնման ընթացակարգերի նախատեսված համապատասխան ենթաբաժնում:

Միաժամանակ նկատի ունենալով, որ www.azdarar.am և www.gnumner.am կայքերում Օրենքի 10-րդ հոդվածի համաձայն հրապարակվում են գնումների բազային միավորը /1 մլն

ՀՀ դրամ/ գերազանցող պայմանագրերի մասին հայտարարությունները՝ հայտնում ենք, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ–ի և <<Յուքոմ>> ՍՊԸ-ի միջև առկա է 2012թ. կնքված մինչև 1 մլն. դրամ արժեքով թվով 34 պայմանագրեր, որոնց ընդհանուր գումարը կազմում է 18432.7 հազ. ՀՀ դրամ, իսկ 2013թ.՝ թվով 30 պայմանագրեր, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 17683,5 հազ. ՀՀ դրամ, և որոնք կնքվել են ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ ձեռք բերելու նպատակով:

Հարգանքով՝

Ա. Գևորգյան

Կատ.Ա. Աղաջանյան
Հեռ՝ 060 544-697